Տնտեսական
համագործակցության և
զարգացման դաշնային
նախարարություն

Վարպետաց դասընթացներ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման ոլորտում՝ նախատեսված Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար

Հայտարարություն՝ 2016 ապրիլ - 2017 մարտ ուսումնական շրջանի համար նախատեսված դասընթացների մասին

Իրականացնող՝

Deutsche GeseUschaft fur Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԲՈՎԱՆԴԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ԳՄՀԸ գործունեության համառոտ նկարագրությունը
Խմբագրական
Միջազգային համագործակցության ակադեմիա. ԳՄՀԸ ակադեմիա
«Վարպետաց դասընթացներ՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏՄԿՎ) ոլորտում»
Նպատակներն ու շահառուները
Ուսումնական գործունեություն
«Վարպետաց դասընթացներ՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏՄԿՎ) ոլորտում» ծրագրի առանցքային տարրերը
Ուսումնական պլանը
Իրականացում
Կոնտակտային անձիք
Դիմորդների մասնագիտական գործունեության համառոտ նկարագիրը
Ի՞նչպես դիմել Հարավային Կովկասի տարածաշրջանի համար նախատեսված «Վարպետաց դասընթացներ՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏՄԿՎ) ոլորտում» ծրագրին
«Վարպետաց դասընթացներ՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏՄԿՎ) ոլորտում» ծրագրի մասնակիցների ընտրության գործընթացը
Հրատարակչական տվյալներ

ԳՄՀԸ. Գործուն լուծումներ

Կայուն զարգացման ապահովման նպատակով մենք, միջազգային համագործակցության շրջանակում, ծառայություններ ենք մատուցում ողջ աշխարհում: ԳՄՀԸ-ն ունի շուրջ 50 տարիների փորձ ամենատարբեր ոլորտներում, այդ թվում նաև տնտեսական զարգացման և զբաղվածության, էներգետիկայի և բնապահպանության, ինչպես նաև խաղաղություն և անվտանգության ապահովման ոլորտներում: Դաշնային նշանակության այս ձեռնարկի տարատեսակ փորձագիտական վերլուծությունները մեծ պահանջարկ են վայելում ողջ աշխարհում, և մեր ծառայություններից օգտվում են Գերմանիայի կառավարությունը, ԵՄ կառույցները, ՄԱԿ-ը ինչպես նաև բազմաթիվ այլ երկրների կառավարություններ: Մեր հիմնական պատվիրատուն է տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարությունը, սակայն մենք սերտորեն համագործակցում ենք նաև մասնավոր հատվածի հետ, խթանելով արդյունավետ գործակցությանը զարգացման քաղաքականության և արտաքին ոլորտների առևտրի միջև:

Բոլոր վերը նշված պատվիրատուները ԳՄՀԸ-ին են վստահում քաղաքական, սոցիալական և տնտեսական փոփոխությունների գաղափարների ձևավորումը, դրանց վերածումը կոնկրետ ծրագրերի, ինչպես նաև նախատեսված փոփոխությունների իրականացումը: Քանի որ մենք շահույթ չհետապնդող դաշնային կառույց ենք, և մեր գործունեության առանցքում գերմանական, ինչպես նաև եվրոպական արժեքներն են: Սա մեզ դարձնում է հուսալի ծառայություն մատուցող, որին մարդիկ կարող են վստահել: Մեր գործընկերների հետ միասին, մենք աշխատում ենք գտնել ճկուն և արդյունավետ լուծումներ, որոնք մարդկանց առջև կբացեն ավելի լավ հեռանկարներ և կբարելավեն վերջիններիս կենսապայմանները:

ԳՄՀԸ-ի գրանցված գրասենյակները գործում են Բոննում և Էշբորնում: Մեր գործունեության ծավալը 2014 թ-ին գերազանցել 2 միլլիարդ եվրոն: Տեղական աշխատուժի շուրջ 70%-ը, թվով 16,410 հոգի, ներկայացնում է գերմանական անձնակազմը, որն իր աշխատանքային գործունեությունն է ծավալում 130 երկրներում: Որպես Ճանաչված գործուղող կազմակերպություն, ներկայումս մենք ունենք զարգացման բնագավառում իրենց աշխատանքային գործունեությունը ծավալող 785 աշխատակից:

Ի լրումն վերոնշյալի, **Միջազգային միգրացիայի և զարգացման կենտրոնը** (**CIM**), որ հանդիսանում է ԳՄՀԸ և Դաշնային զբաղվածության գործակալության համատեղ ձեռնար, արտերկրում գործատուների մոտ աշխատանքի է տեղավորել շուրջ 1,000 ինտեգրված և վերադարձող փորձագետի, ապահովելով վերջիններիս ֆինանսական աջակցությամբ և խորհրդատվական ծառայություններով*:

Ունենալով 75 միլլիոնից ավել բնակչություն, հարուստ առևտրային գործընկերների միջև ռազմավարական դիրք, արևելքում՝ Ռուսաստանի հետ սահման, իսկ արևմուտքում՝ ԵՄ քաղաքացիների համար նախատեսված սպառման լայն շուկա, Գերմանիայի համար Հարավային Կովկասը՝ Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը, առևտրային և ներդրումային գրավիչ ուղղություն է հանդիսանում:

Այնուամենայնիվ, չնայած վերջին շրջանում արձանագրված աճին, որը 1998-2010 թ ընթացքում կազմել է ՀՆԱ շուրջ 8%, արդյունավետության մակարդակը տարածաշրջանում դեռևս մնում է համաշխարհային միջինից 77 տոկոսով ցածր: Սա նաև արտացոլում է մեկ շնչին ընկնող օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ծավալը, որը 6 անգամ պակաս է քան Կենտրոնական Եվրոպայի երկրներում և այդ ներդրումները հիմնականում կենտրոնացած են էներգետիկ ոլորտում: ՏՀԶԿ,

Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի երկրների մրցունակությանը նվիրված ակնարկում առաջարկվում է ավելացնել օտարերկրյա ուղղակի ներդրումները և բարձրացնել տարածաշրջանի երկրների մրցունակությունը, ոչ միայն ՓՄՁ-ների համար ֆինանսների հասանելիությունը բարելավելու և ներդրումների համար առավել նպաստավոր հնարավորություններ ստեղծելու միջոցով, այլ և միջազգային ու ներտարածաշրջանային ներդրումները և առևտուրը խթանելու միջոցով: Այս նախաձեռնությունների ազդեցությունը տնտեսական քաղաքականության վրա կարող է զրոյի հավասարվել, եթե ՏՄԿՎ բարեփոխումներն ուշանան: Տեխնիկական վերազինումն ու արդյունավետության բարելավման տեսանկյունից հարավկովկասյան երկրների տնտեսությունների ձեռքբերումները պետք է ընթանան մարդկային կապիտալի զարգացմանը և ՏՄԿՎ ոլորտում գերիշխող գործընթացների փոփոխությանը զուգահեռ: Ըստ Վերապատրաստման եվրոպական միջպետական հիմնադրամի (ETF), արդյունավետ ՏՄԿՎ ոլորտի առջև ծառացած հիմնական մարտահրավերներից է հասարակական և ինստիտուցիոնալ արդյունավետ երկխոսության, պետական և մասնավոր հատվածի միջև համագործակցության և ՏՄԿՎ դիրքի ու իմիջի բարելավման ապահովումը: Առավել մեծ կարևորություն ունի ՏՄԿՎ բովանդակության բարելավումը և դրա համապատասխանեցումը տեխնոլոգիական նորագույն զարգացումներին, ինչպես նաև արդյունաբերության արդի և ապագա պահանջներին:

ՏՄԿՎ ոլորտի բարեփոխման համար հրատապ անհրաժեշտ է ուսուցիչների կրթության և աշխատավայրում անցկացվող որակավորման բարձրացման դասընթացների համակարգի մշակումը, ուսումնարանների կառավարման բարեփոխումը՝ կիզակետում պահելով դրանց ավելի մեծ ինքնուրույնության ապահովումը, առավել լավ կառավարումը, տարատեսակ աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների կառավարումը՝ մենեջմենթի ժամանակակից մեթոդներով, ինչպես նաև հանրության առջև հաշվետվողականությունը:

«Վարպետաց դասընթացներ ՏՄԿՎ ոլորտում՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար» ծրագիրը մշակվել է բարձրացնելու համար այն երիտասարդ մասնագետների հմտությունների մակարդակը, ովքեր հանձնառու են իրենց աշխատանքային գործունեությունը ծավալել ՏՄԿՎ ոլորտում և ցանկանում են իրենց հմտությունները ներդնել ի նպաստ ՏՄԿՎ ոլորտի բարեփոխումների գործընթացում առկա մարտահրավերների հաղթահարման:

Յոհանես Ֆլայշլե, ԳՄՀԸ

*Թվերն՝ առ դեկտեմբեր 31. 2014 թ

Միջազգային համագործակցության ակադեմիա

Միջազգային համագործակցության ակադեմիան ԳՄՀԸ-ին պատկանող ժամանակակից ակադեմիա է, որն ապահովում է բարձր որակավորմամբ մարդկային ռեսուրսների ձևավորում և վերապատրաստման դարնթացներ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պատվիրատուների համար: Սա ներառում է դասընթացների լայն շրջանակ և անհատական պահանջներին համապատասխանեցված անձնակազմի զարգացմանը և վերապատրաստմանն ուղղված միջոցառումներ, որոնք իրականացվում են Գերմանիայում, մեր գործընկեր երկրներում, ինչպես նաև վիրտուալ հարթակներում և նախատեսված են թե արտաքին, թե ներքին պատվիրատուների համար:

Պորտֆոլիոն

Մասնագետների հիմնական որակավորումները և կարողությունները

Խոսելը, գործելը, խորհուրդներ տալը, կառավարելն ու միջազգային ասպարեզում ցանցեր ձևավորելը հանդիսանում են «միջազգային գործունեության հմտություններ»: Սրանից զատ կա նաև թեմաների լայն շրջանակ, որի հիման վրա էլ մշակվում են մեր դասընթացները: Դասընթացների ծրագրերը մշակվում են մեր պատվիրատուների հետ համատեղ: Իրենց ռազմավարական նպատակների լիակատար իրականացմանն օժանդակելու նպատակով, մենք մեր մշտական դասընթացների տարրերը համադրում ենք հատուկ մշակված բաղադրիչների հետ, որոնք համապատասխանեցվում են կոնկրետ պահանջներին: Ներկայումս առաջարկվող ծրագիրը հասանելի է

- ՄՀԱ ծրագրերի կատալոգում:
- Ուսումնամեթոդական հայեցակարգում:

Մարդկային կարողությունների զարգացում

Մենք տրամադրում ենք խորհրդատվություն, մշակում և իրականացնում ենք մարդկային կարողությունների զարգացման համալիր ծրագրեր:

- Հնարավորություն ենք ընձեռում մարդկանց իրականացնել իրենց գործունեությունը;
- Կայուն լուծումները իրականություն դարձնելու նպատակով հզորացնում ենք տեխնիկական փորձագետների կարողությունները;
- Հնարավորություն ենք ընձեռվում ղեկավարներին (մենեջերներին) նախագծել փոփոխությունները:
- Ամրապնդում ենք դասընթացավարների և խորհրդատուների դերը՝ որպես տարածողներ;
- Ձևավորում և ամրապնդում ենք ղեկավարների պատասխանատվությունը;
- Միավորում ենք մարդկանց ապահովելու համար ուսումնառության և փոփոխությունների շարունակականությունը;

Հաճախ հանդիպող մասնագիտացումների համար մենք առաջարկում ենք գոյություն ունեցող մոդուլները (Ուսումնական պլանին համապատասխանող ծառայություններ), միևնույն ժամանակ սակայն, առաջարկում ենք նաև, տվյալ իրավահճակին և համատեքստին հատուկ համապատասխանեցված հայեցակարգեր (ծրագրման ծառայություններ):

Առանցքային ծառայությունները

- Առաջնորդության զարգացում;
- Ուսումնական պլանին առնչվող ծառայություններ և հատուկ մշակված միջոցառումներ՝ ուղղված միջազգային համագործակցության առանցքային հմտությունների ձևավորմանը, Գերմանիայում, ողջ աշխարհում և վիրտուալ մակարդակում;
- Մարդկային կարողությունների զարգացմանն (ՄԿԶ) ուղղված խորհրդատվական ծառայություններ;
- ՄԿԶ ծառայությունների տրամադրում;
- ԳՄՀԸ ազգային աշխատակազմի մարդկային ռեսուրսների զարգացում;
- Ուսումնառության և համագործակցության գործընթացների բարելավում՝ ուսուցումնամեթոդական նորարարական մեթոդների ներդրման միջոցով (մշակույթին առնչվող օրինակներ, մասնագիտական կարողությունների գնահատման չափանիշներ և այլն);
- Ուսումնառություն՝ սոցիալական նոր ցանցերի միջոցով;
- Ուսումնական միջազգային հարթակներ ձևավորում և կազմակերպում;
- Փորձագետների և դասընթացներն ավարտած մասնակիցների հետ կապի հաստատում:

Վարպետաց դասընթացներ ՏՄԿՎ ոլորտում

Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից մասնակիցների համար

Առաջնորդների միջազգային վերապատրաստման ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ՏՄԿՎ ոլորտը ներկայացնող բարձրակարգ և ոգևորությամբ լեցուն մասնագետներին հնարավորություն է ընձեռում բարելավել իրենց մասնագիտական կարողությունները, գիտելիքներն ու հմտությունները՝ ՏՄԿՎ ոլորտում իրենց դասավանդման, կառավարման և վարչարարական հետագա պարտականությունների իրականացման նպատակով:

«Վարպետաց դաընթացներ» ծրագրի հիմնական նպատակն է բարելավել մասնակիցների մասնագիտական կարողությունները՝ այն է ուսուցման վերջնարդյունքները պատշաճ կերպով կիրառել տվյալ համատեքստում (օր. կրթության ոլորտում, աշխատանքում, անձնական կամ մասնագիտական զարգացման գործընթացում):

«Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագիրը վերապատրաստման գործնական դասընթաց է, որն իր կառուցվածքով հիմնականում համընկնում է ՏՄԿՎ ոլորտի աշխատանքային գործընթացների հետ: Մոդուլային կազմն առաջարկում է ՏՄԿՎ ոլորտին առնչվող հարցերի/խնդիրների լայն շրջանակ՝ դպրոցների կառավարումից մինչև մանկավարժության ու դիդակտիկային առնչվող խնդիրներ: Սակայն, «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի ուշադրության կենտրոնում կլինեն դասավանդման և ուսումնառության մեթոդները, մանկավարժության ու ՏՄԿՎ ոլորտի դիդակտիկ ասպեկտներին առնչվող խնդիրները:

Հաջողությամբ ավարտած յուրաքանչյուր մոդուլի համար մասնակիցները կստան կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգով սահմանված (ECTS) միավորներ: Ծրագրի ավարտից հետ կրեդիտների **փոխանցման** և կուտակման **եվրոպական համակարգի կրեդիտները** կարող են ճանաչվել ՏՄԿՎ-ին առնչվող միջազգային մագիստրոսական ծրագրերի կողմից, այդպիսով նպաստելով մասնակիցների կողմից հետագայում մագիստրոսի աստիճանի ձեռքբերմանը՝ համալսարանում ուսման առավել կարճ ժամկետում:

Ծրագիրը կմեկնարկի Վրաստանում, առաջին և երկրորդ մոդուլներով: Երկրորդ ամսից սկսած մասնակիցներն իրենց ուսումը կշարունակեն Գերմանիայում: Շնորհիվ տեխնոլոգիական և տնտեսական ամուր նախադրյալների, ուսումնարանների և մասնավոր ոլորտի միջև երկարատև համագործակցության պատմության և ՏՄԿՎ բոլոր ոլորտներում, ներառյալ պրոֆեսիոնալ ուսումնամեթոդական ու մանկավարժության բնագավառում իրականացվող հետազոտությունների, Գերմանիան ապահովում է գերազանց ուսումնական միջավայր հատկապես ՏԿՄՎ ոլորտում:

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համար նախատեսված «Վարպետաց դասընթացներ՝ ՏԿՄՎ ոլորտում» ծրագրի շրջանակում կբարելավվի տարբեր հաստատություններ ներկայացնող մասնակիցների մասնագիտական կարողությունների մակարդակը՝ ՏԿՄՎ բնագավառում: Ակնկալվում է, որ դասընթացից ավարտից հետո վերադառնալով և իրենց գործունեությունն իբրև տարածողներ ծավալելով, մասնակիցներն իրենց ներդրումը կունենան գործուղող հաստատության աշխատանքային գործընթացներում՝ ստացած գիտելիքն ու հմտությունները կիսելով գործընկերների հետ:

Այնուամենայնիվ, մարդկային կարողությունների զարգացումը որպես կարողությունների հզորացման ԳՄՀԸ ընդհանուր մոտեցման մաս, խնդիրն ընդհանուր է դիտարկում, անհատական կարողությունների զարգացումը կապելով այն հաստատության կարողությունների բարելավման հետ, որը ներկայացնում է տվյալ մասնակիցը:

«Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿ ոլորտում» ծրագրի մասնակիցները հետամուտ կլինեն իրենց կարիերային որպես ուսումնարաններում և քոլեջներում դասավանդող ապագա ուսուցիչներ և ղեկավարներ: Նրանք օժտված են իրենց տեխնիկական մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխություններ նախաձեռնելու համապատասխան մանդատով և կարողություններով, և կարող են տևական ժամանակ հետևել այս գործընթացներին, իրենց մասնագիտական կարողություններն ակտիվորեն ներդնելով ուսուցիչների վերապատրաստման ազգային համակարգում:

«Վարպետաց դարնթացներ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի շահառուներն ու շահագրգիռ կողմերը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում

Ծրագրի մասնակիցները հավաքագրվում են մեծ թվով հաստատություններից, այդ թվում նաև պետական մարմիններից և ուսումնարաններից:
Այսպիսով, ծրագիրն հասցեագրված է ոչ միայն ուսուցում անցողներին, այլ նաև շահառուների լայն շրջանակին մասնավորապես մասնակցին գործուղող հաստատություններին: Մենք ակնկալում ենք, որ վերապատրաստում անցած մասնակիցները, դասընթացից հետո, ստացված տեղեկատվությամբ կկիսվեն իրենց հաստատություններում և կգործեն որպես տարածողներ՝ հնարավորություն ընձեռելով իրենց գործընկերներին օգուտ քաղել ստացված մասնագիտական կարողություններից, հմտություններից և գիտելիքներից:

Այս մոդուլների շրջանակում ծրագիրը հնարավորություն է ընձեռում անցկացնել համեմատություններ, սովորել և ադապտացնել հարավկովկասյան բոլոր երեք երկրների և Գերմանիայի փորձը, ինչպես նաև առաջարկում է Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում շրջանակային պայմանների ու պահանջների փոփոխման հեռանկարներ:



Ուսումնական գործունեությունն ու ձևաչափերը

Վարպետաց դարնթացների մոդուլներ կազմված են միմյանց հետ փոխկապակցված ուսումնական միջոցառումներից: Ուսումնական միջոցառումներից յուրաքանչյուրն առչնվում է ուսուցման կոնկրետ նպատակի հետ, հնարավորություն ընձեռելով մասնկիցներին համակողմանիորեն զարգացնել մասնագիտական կարողություններր, որոնք անհրաժեշտ են իրենց աշխատանքային միջավայրում՝ ՏՄԿՎ ոլորտում: Դասախոսություններր և լսարանային ոճի ուսումնասիրմանր նվիրված դասրնթացներր համադրվում են իրական պայմաններին ծանոթանալու նպատակով կատարվող այցելությունների և գործնական դասընթացների հետ:

Այնուամենայնիվ, ԳՄՀԸ-ն, ծրագրի առանցքում է դնում անհատին: Ակնկալվում է, որ ուսումնական պրոցեսի համար պատասխանատվությունր ստանձնում են հենց իրենք, մասնակիցներր: ԳՄՀԸ-ն առաջարկում է պատշաճ և խթանող կրթական միջավայր, այդ թվում նաև մեծահասակների կրթության ժամանակակից և համապատասխան մեթոդներ ու ձևաչափեր, բազմամշակույթ աշխատանքային միջավայր և փորձառու դասընթացավարներ, փորձագետներ ու ֆասիլիտատորներ:

Ի վերջո, մասնակիցն ինքր պետք է ստանձնի ՏՄԿՎ բնագավառում իր կարողությունների բարելավման պատասխանատվությունր:
Հմտություններ/կարողություններ հնարավոր չէ ուսուցանել, դրանք կարելի է միայն ձեռք բերել: Մասնագիտական կարողություններր չեն սահմանափակվում զուտ իմացական տարրերով (տեսությունների, հասկացությունների ընկալում, կամ գիտելիքի կիրառում) այլ ներառում են նաև ֆունկցիոնալ ասպեկտ (այդ թվում նաև տեխնիկական հմտություններ), ինչպես նաև միջանձնային շփման տարրեր (օր. սոցիալական կամ կազմակերպական հմտություններ) ու էթիկական արժեքներ: Այդ իսկ պատճառով, մասնագիտական կարողությունները հնարավոր է ձեռք բերել միայն ինքնուրույնաբար և դրանք պետք է ամրապնդվեն գիտելիքի, հմտությունների, փորձի ու արժեքների համադրման միջոցով:

«Վարպետաց դասնընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագիրը կազմված է դասավանդման և ուսումնառության տարատեսակ ձևաչափերից, որոնց թվին են պատկանում

Ուսումնական խորհրդատվությունը

Ուսումնական խորհրդատվություններն անց են կացվում ֆունդամենտալ մեթոդներր, հմտություններր և մասնագիտական կարողություններր խորացնելու նպատակով: Ավելին, դրանք հնարավորություն են ընձեռում առավել մանրակրկիտ արձագանքել առանձին մասնակիցների հարցերին ու գաղափարներին:

Կոլոքվիումները

Կոլոքվիումր առաջարկում է ուսուցիչների և սովորողների միջև խորքային գիտական երկխոսության հարթակ՝ ուշադրությունր կենտրոնացնելով առանձին հարցերի վրա: «Վարպետաց դարնթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի շրջանակում, կոլոքվիումր փորձարկման ծրագրերնառաջ մղելու և դրանք մանրամասն քննարկելու հնարավորություն է ընձեռում:

«Վարպետաց դարնթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում » ծրագրի աշխատանքային լեզուն

Անգլերեն լեզվի լավ իմացությունր Գերմանիայում իրականացվող «ՏՄԿՎ ոլորտի մասնագետների» ծրագիրր հաջողությամբ ավարտելու անկյունաքարերից է: Ուստի, անգլերենի լավ իմացությունր ծրագրի մասնակցության նախապայմաններից է: «Վարպետաց դասրնթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծարգրի ընթացքում հնարավոր է ձեռք բերել կրեդիտներ՝ ՏՄԿԿՎ ոլորտի մագիստրոսական ծրագրերում ուսանելու համար: Յուրաքանչյուր մոդուլր հաջողությամբ ավարտելուց հետո կտրվեն ECTS կրեդիտային միավորներ, որոնք կգործեն և համալսարանների կողմից կճանաչվեն միայն այն դեպքում, եթե «ՏՄԿՎ պրոֆեսիոնալներ» ծրագրի մասնակիցր հաջողությամբ հանձնի անգլերեն լեզվի իմացության միջազգային թեստ (օր. TOEFL, Cambridge English Language Assessment):

Վարպետաց դասընթացների առանցքային տարրերը

Մասնագիտական ծրագրերը կազմում են «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» դասընթացի անբաժանելի մասը և հնարավորություն են ընձեռում իրական պայմաններում դիտարկել, սովորրել ինչպես նաև կիսվել առանձին աշխատանքային գործընթացներին բնորոշ առանձնահատկություններով ու պրակտիկ փորձով, համագործակցելով նույն ոլորտը կամ բնագավառը ներկայացնող գերմանացի գործընկերների հետ: Սա թույլ կտա մասնակիցներին ավելի խորը պատկերացում կազմել Գերմանիայում ՏՄԿՎ ոլորտի ամենօրյա մենեջմենթի վերաբերյալ: Գործնական դասընթացներն առավելագույնս պետք է կապակցվեն փորձարկման/փոփոխություններին միտված ծրագրերի և յուրաքանչյուր մասնակցի անհատական աշխատանքային միջավայրի հետ:

Սեմինարները

Սեմինարների նպատակն է մասնակիցներին ներգրավել տեսական և գործնական հարցերին առնչվող գիտական աշխատանքի մեջ՝ դասավանդողների և սովորողների միջև մտքերի ակտիվ փոխանակման միջոցով: Ի լրումն վերը նշվածի, սեմինարի կարևորագույն բաղադրիչներից է ուսուցանելու միջոցով սովորելը, այն է՝ ձեռք բերած գիտելիքի խորացումը՝ ուսումնական խմբի շրջանում այն տարածելու միջոցով:

Փորձարկման (փոփոխություններին միտված) ծրագիր

Աշխատավայրը և «Վարպետաց դասընթաց՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագիրը միմյանց կապող օղակը փորձարկման ծրագիրն է:

Նախքան Գերմանիայում Վերապատրաստման շրջանի մեկնարկը, յուրաքանչյուր մասնակից իր վերադասի հետ համաձայնեցնում է փոփոխություններին միտված ծրագրի հստակ և կառավարելի թեմաները: Փորձարկման այդ ծրագիրը կմշակվի վերապատրաստման ողջ ընթացքում, և այս գործընթացում իրենց ներդրումը կունենան ՏՄԿՎ ոլորտի գերմանական փորձագետները: Փորձարկման տվյալ ծրագրի շրջանակում մասնակիցները կկիրառեն, կյանքի կկոչեն այն գիտելիքները, մեթոդները և հմտությունները, որոնք ձեռք են բերել դասընթացի ընթացքում: Ակնկալվում է, որ փորձարկման ծրագիրը կնպաստի համապատասխան փոփոխությունների գործընթացի նախաձեռնմանը և կանոնակարգմանը այն հաստատությունում, որը ներկայացնում է տվյալ մասնակիցը, և/կամ այդ հաստատության աշխատանքային արդյունավետության բարձրացմանը:

«ՏՄԿՎ մասնագետներ» ծրագրի պարագայում փորձարկման ծրագրերը պետք է լինեն կառավարելի և փոքրածավալ, սակայն պետք է ներառեն տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման, տնտեսության ու աշխատաշուկայի ողջ դաշտը: Այնուամենայնիվ, փոփոխություններին միտված այս ծրագրերը կարող են շատ տարբեր լինել՝ կախված գործուղող հաստատությունից և մասնակցի աշխատանքային միջավայրից:

- Փորձարկման ծրագրերը կարող են սակայն, առնչվել այնպիսի թեմաների, ինչպիսին է օրինակ կապը մասնագիտական ուսումնական հաստատությունների և տնտեսության միջև:

- Գործողությունների վրա հիմնված ուսումնական հայեցակարգերի մշակումը կամ դրանց ադապտացումը:
- Ուսուցողական նյութերի մշակում՝ հստակ սահմանված թիրախային խմբերի համար:
- Գործընթացների կամ հմտությունների փոխանցում՝ հաստատության աշխատանքային արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Գրեմանիա այցից հետո, փորձարկման ընթացքում ԳՄՀԸ-ն առաջարկում է փորձարկման ծրագրերի իրականացմանն ուղղված տեխնիկական աջակցություն՝ էլեկտրոնային ուղղորդման և աշխատաժողովների տեսքով: Փորձարկման ծրագրի իրականացման և ռեսուրսների սեփականատերը մասնակցի կազմակերպությունն է:

Ուսումնական պլան

Ուսումնական պլանը պետք է առավելագույնս համապատասխանեցվի առկա պահանջներին և այն պետք է հստակեցվի մասնակիցների վերջնական ընտրությունից հետո: «ՏՄԿՎ մասնագետներ» ծրագրի ստորև ներկայացվող մոդուլային կառուցվածքը զուտ նախնական է:

Այնուամենայնիվ, այն պարագայում, եթե մասնակիցը նախատեսում է շարունակել իր կրթությունը ՏՄԿՎ ակադեմիական ծրագրերի շրջանակում, յուրաքանչյուր մոդուլի ավարտին, կտրվեն ECTS կրեդիտային միավորներ, որոնք կգործեն ՏՄԿՎ ոլորտի միջազգային մագիստրոսական ծրագրերի համար գրանցվելիս:

Ուսումնական պլան

Մոդուլ 1.

Պրակտիկ վերապատրաստում և դիդակտիկա/նեղ մասնագիտացում՝ ըստ ոլորտների (օրինակ՝ մետաղագործություն, էլեկտրատեխնիկական գործ, ավտոմոբիլային տեխնիկա):

Բովանդակություն

- Աշխատանքային գործընթացների գնահատման որոշ գործիքների կիրառմանը նվիրված հետագա վերապատրաստում:
- Աշխատավայրի անվտանգություն:

Մոդուլ 2.

ՏՄԿՎ հիմունքներ և դիդակտիկա;

Բովանդակություն.

- Հավաստագրման և ստանդարտացման հիմունքները/չափորոշիչները;
- Ուսումնական պլանի մշակում;
- Դասընթացների հաջորդականության պլանավորում և իրականացում;
- Կատարողականի չափում և գնահատում:

Մոդուլ 3.

Ուսումնական ծրագրի և ուսումնական տեխնոլոգիաների մշակում:

Բովանդակություն.

- Ուսումնառության հաջորդականության պլանավորում և իրականացում;
- Դասավանդման և ուսումնաօժանդակ նյութեր/միջոցներ;
- էլեկտրոնային ուսուցման գործիքներ;
- Դասավանդման տեխնոլոգիաների դերը՝ առանձին դիդակտիկ մոդելներում:

Մոդուլ 4.

Նեղ մասնագիտացման դիդակտիկա:

Բովանդակություն.

- Դասընթացների մշակման սկզբունքներն ու գնահատման մեթոդները;
- Կրթական հասկացությունների մշակում և գնահատում՝ դասընթացի ձևավորման նպատակով;
- Հետագա դասընթացներին ուղղված աշխատանքային գործընթացներ;
- Լաբորատոր աշխատանքների և տեխնիկական փորձերի նախապատրաստում;
- Կոնկրետ օրինակների ուսումնասիրություն;
- Տեխնիկական փորձերի մշակում:

Մոդուլ 5.

Միջազգային տեխնիկական մասնագիտական կրթություն և վերապատրաստում:

Բովանդակություն.

- ՏՄԿՎ համակարգերի համեմատություն:
- ՏՄԿՎ տարածաշրջանային ծրագրերի և համակարգերի համեմատություն:

Մոդուլ 6.

Գործնական դասընթացներ:

Բովանդակություն.

- Հետագա ուսումնական միջոցառումների ներկազմակերպական կառուցվածքը;
- Հետագա ուսումնական միջոցառումների որակի վերահսկողություն;
- Աշխատանքների և աշխատաժողովների պլանավորում և աշխատանքների կազմակերպում:

Մոդուլ 7.

Փորձարկման/փոփոխություններին միտված ծրագրի բովանդակության մշակում:

- Հստակ ձևակերպված և թիրախային ծրագրի մշակում՝ Հարավային Կովկասում այն իրականացնելու նպատակով:

Մասնագիտական կարողությունները հնարավոր չէ ուսուցանել, դրանք կարելի է միայն ձեռք բերել փորձի կուտակման բարդ գործընթացի արդյունքում: Մասնագիտական կարողությունները չեն սահմանափակվում զուտ իմացական տարրերով (տեսությունների, հասկացություններ ընկալում, կամ գիտելիքի կիրառում), այլ ներառում են նաև ֆունկցոնալ ասպեկտ (ներառյալ տեխնիկական հմտությունները) ու միջանձնային շփումների տարրեր (սոցիալական և կազմակերպչական հմտություններ և էթիկական արժեքներ: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր անհատ պետք է ինքնուրույն ձեռք բերի մասնագիտական կարողությունները և ամրապնդի դրանք գիտելիքի, հմտությունների, փորձի և արժեքների համադրման միջոցով:

Իրականացում

(Նախնական)

«Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագիրը բաժանվում է երեք փուլի. Նախապատրաստական փուլ, դասընթացի իրականացման փուլ և փորձարկման փուլ: Ծրագրի ընդհանուր տևողությունը կազմում է 2016թ-ի հունվարից մինչև 2017 ապրիլը:

Դասընթացի շրջանը՝ Վրաստանում

2016 ապրիլ - 2016 մայիս

Դաընթացի շրջանը Գերմանիայում

մայիս 2016 – սեպտեմբեր 2016

Փորձարկման փուլ (Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում)

Հոկտեմբեր 2016 - մարտ 2017

Ընդհանուր առմամբ, «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագիրն աջակցում է լայնախոհ, երիտասարդ դիմորդներին, ովքեր օժտված են վառ անհատականությամբ և պատրաստակամ են իրենց հաստատություններում, իրենց ազդեցության շրջանակում ստանձնել փոփոխություններ տարածող ուժի դերը: Դիմորդները բաց են միջազգային միջավայրի ազդեցությունը կրելու համար և մեծ ցանկություն ունեն սովորել ՏՄԿՎ տարբեր համակարգերից:

Ամեն դեպքում, դիմորդները պետք է գիտակցնեն որ 6 ամսով թողնելու են իրենց ընտանիքները և այդ ողջ ընթացքում կրկին վերադառնալու են ուսանողական նստարանին:



Դիմորդների մասնագիտական գործունեության նկարագրությունը

Դիմորդները պեռք է համապատասխանեն հետևյալ պահանջներին

- Պետք է ունենան նվազագույնը երեք տարվա աշխատանքային փորձ ՏՄԿՎ կամ կրթության ոլորտի ծրագրերի կառավարման ոլորտում (պետական կառավարման համակարգում);
- Առնվազն երեք տարվա մասնագիտական փորձ՝ ուսումնարաններում կամ քոլեջներում;
- Բարձրագույն կրթություն՝ ՏՄԿՎ կամ կրթության ոլորտի կառավարման այլ բնագավառում, կամ բակալավրի աստիճան՝ ՏՄԿՎ տեխնիկական բնագավառում;

- Պետք է ազատ տիրապետեն անգլերեն լեզվին;
- Դիմորդների տարիքը չպետք է գերազանցի 45 տարեկանը;
- Պետք է ունենան առաջնորդելու փորձ:

Դիմորդը պետք է ստանա իրեն գործուղող հաստատության լիակատար աջակցությունը

- Գործատուն պետք է տեղյակ լինի և աջակցի դիմորդի վերապատրաստման ծրագրին;
- Գործատուն պետք է «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլոտում» ծրագրի ավարտից հետո երաշխավորի դիմորդի վերաինտեգրումը, և դիմորդն էլ վերապատրաստումն անցնելուց հետո պետք է շարունակի աշխատել նշված հաստատությունում:
- Գործատուն պետք է գիտակցի, որ ծրագրի շահագրգիռ կողմը, նույնիսկ շահառուն իր հաստատությունն է, և ուստի պետք է աջակցի փոփոխությանը միտված ծրագրի իրականացմանը, որում ներգրավված է մասնակիցը:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁԻՔ

Առաջնորդների միջազգային վերապատրաստման «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի համար ԳՄՀ-ում պատասխանատու են հետևյալ անձիք.

Դաընթացի ընդհանուր համակագումը Գերմանիայում

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ԳՄՀԸ

Դր. Հարրի Շտոլտե, ԳՄՀԸ բաժնի վարիչ
Պրն.Յոհանես Ֆլայշլե, Ծրագրի ղեկավար

Շելլինգի փողոց 3-4
39104 Մագդեբուրգ, Գերմանիա
հեռ +49 391 5371 308 |
ֆաքս +49 391 5371 329
Էլ. փոստ. johannes.fleischle@giz.de | I www.giz.de

Համակարգումը Հայաստանում

ԳՄՀԸ գրասենյակը Հայաստանում
Դր.Յուլյա Ստակյան

Հայաստանի Հանրապետություն
Երևան 0019 Բաղրամյան 4/1
Հեռ. +374 10 589337
Էլ. փոստ. yulia.stakyan@giz.de | I www.giz.de

Համակարգումը Ադերբեջանում

ԳՄՀԸ գրասենյակ Բաքվում
Տկն. Շալալա Կամիլովա

Ադրբեջան, Բաքու,
Նիզամու փ. 10, 5-րդ հարկ
AZ1001 |
հեռ +994 12 4978068
Էլ. փոստ shalala.kamilova@giz.de | I www.giz.de

Համակարգումը Վրաստանում

ԳՄՀԸ գրասենյակ Թբիլիսիում
Դր. Իրակլի Շուգուլայա

Վրաստանի Հանրապետություն,
Թբիլիսի 0108, Ռուստավելու պողոտա 42,

Ի՞նչպես դիմել Հարավային Կովկասի տարածաշրջանի համար նախատեսված «Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրին

Բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակները պետք է հասանելի լինեն՝ ըստ պահանջի: Կարող է ուղարկվել նաև հետաքրքրության համառոտ շարադրանքը՝ հետևյալ էլ. հասցեով mastertrainer-application@giz.de վերնագրում նշելով՝ «Վարպետաց դասընթացները ՏՄԿՎ ոլորտում՝ 2016թ-ի համար»:

Դիմումները կարող են ուղարկվել նաև թղթային տարբերակով վրաստանյան հետևյալ հասցեներով.

Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերություն

Վրաստանի Հանրապետություն,
Թբիլիսի 0108, Ռուստավելու պողոտա 42, կամ
Գրիբոեդովի փ. 31ա,
Պրն. Իրակլի Շուգուլայային

Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝ 26.02.2016թ.

«Վարպետաց դասընթացներ՝ ՏՄԿՎ ոլորտում» ծրագրի ընտրական գործընթացը

Բոլոր դիմորդները պետք է անցնեն ընտրության բաց և թափանցիկ գործընթացի միջով:

Հայտի համապատասխանությունը ստուգելուց հետո թեկնածուները կհրավիրվեն մասնակցելու Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում անցկացվող վերջնական ընտրությանը:

Վերջնական ընտրությունը բաղկացած է անհատական հարցազրույցից և ներխմբային գնահատումից, որի ընթացքում քննարկվում են ՏՄԿՎ ոլորտին առնչող հարցեր:

Վերջնական ընտրության անցկացման ժամկետը կներկայացվի ամենաուշը 2016 թ-ի փետրվարի 29-ին:

Հրատարակչական տվյալներ

Հրատարակվել է
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից

Գրանցված գրասենյակների հասցեները՝ Բոննում և Էշբորնում

Դագ-Համարսկյոլդ -Վեգ 1-5 65760 Էշբորն
Հեռ. +49 6196 79-0
ֆաքս +49 619679-115

Ֆրիդրիխ-Էբերտ ծառուղի 36 + 40
53113 Բոնն
Հեռ. +49 228 44 60-0
ֆաքս +49 228 44 60-17 66
info@giz.de
www.giz.de

Խմբագրվել է

ԳՄՀԸ / Միջազգային համագործակցության և
ՏՄԿՎ ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման ակադեմիայի կողմից
UNEVOC Centre, Մագդեբուրգ
Շելինգի փողոց 3-4 | 39104 Մագդեբուրգ
Գերմանիա

Դոկտոր Հարի Շտոլտե| Բաժնի ղեկավար

Պրն. Յոհաննես Ֆլայշլե| Ծրագրի ղեկավար
hrd@giz.de
Հեռ. + 49 (0)391 5371 300
Բջջ.+ 49 (0)160 7016 489

ԳՄՀԸ–ն պատասխանատվություն է կրում հրապարակված նյութի բովանդակության համար:

Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձ նարարությամբ:

Ձևավորում էջերի շարվածք և տպագրություն:

ԳՄՀԸ

Տվյալներն առ 2015թ. դեկտեմբերի

Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության գրասենյակների հասցեներր

Բոնն, Դալմանի փողոց 4,
53113, **Բոնն**
Հեռ +49 228 99 535-0
Ֆաքս +49 228 99 535-3500

Բեռլին| Եվրոպայի տուն, Շթրեզեման փողոց 94
10963 Բեռլին
Հեռ. +49 30 18 535-0
Ֆաքս. +49 30 18 535-2501
poststelle@bmz.bund.de